

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի փորձագետ Կարեն Թորոսյանի 2019 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2020 թվականի մարտի 13-ը աշխատած ժամանակահատվածի համար

Ես՝ Կարեն Թորոսյանս Պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնում, որպես փորձագետ աշխատում եմ 2019 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2020 թվականի մարտի 13-ը ընկած ժամանակահատվածը և իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Նշված ժամանակահատվածում իմ տրամադրության տակ եղել են 8 շահառու, որից 1 շահառու՝ պայմանական վաղաժամկետ ազատված, 3 շահառուի տրամադրվել է զեկույց, 2 շահառու՝ տուգանք պատժատեսակով, 2 շահառու՝ հանրային աշխատանքներ պատժատեսակով:

2. Պատասխանել եմ Պրոբացիայի ծառայությունում ստացված գրություններին, ինչպես նաև քաղաքացիների, պրոբացիայի շահառուների դիմումներին և բողոքներին:

3. Մասնակցել եմ պրոբացիայի շահառուների վերասոցիալականացմանն ուղղված սոցիալ-հոգեբանական աշխատանքներին, պրոբացիայի 15 շահառուի ցուցաբերել եմ հոգեբանական աջակցություն:

4. Ընդունել և հոգեբանական աջակցություն եմ ցուցաբերել պրոբացիայի շահառուներին, ինչպես նաև կատարել եմ ռիսկերի և պահանջմունքների գնահատում, կազմել եմ վերասոցիալականացման անհատական ծրագրեր:

5. Կազմակերպել եմ պրոբացիայի շահառուների նկատմամբ մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման աշխատանքներ:

6. Կատարել եմ տնայց բոլոր շահառուների բնակարաններ, ծանոթացել սոցիալական պայմաններին, ուսումնասիրել կյանքի և աշխատանքի նկատմամբ ունեցած մոտիվացիաները:

7. Մասնակցել եմ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման հետ կապված դատական նիստի 1 շահառուի մասով:

8. Շահառուների հետ սոցիալական և մշակութային միջոցառումներ իրականացնելու նպատակով այցելել եմ մարզի մշակութային և սոցիալական ծառայություններ իրականացնող մարմիններ:

Արմավիրի մարզային մարմնի փորձագետ



Կարեն Թորոսյան

13.03.2020 թ.